Հաստատում եմ
«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՍՊԸ տնօրեն
_____Լ. Մեհրաբյան
«04» 07 2022 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ դասախոսի ընտրության

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ ՄՈՒՀ) դասախոսի ընտրության գործընթացը:
2. Դասախոսի թեկնածուները ներկայացվում են ցիկլային հանձնաժողովների կողմից կամ ինքնաներկայացմամբ:
3. Ընտրվող դասախոսի գործերը քննարկվում են այն ցիկլային հանձնաժողովում, որտեղ վերջինս իրականացնելու է իր աշխատանքային գործունեությունը: Քննարկման ընթացքում հաշվի են առնվում յուրաքանչյուր թեկնածուի գիտելիքները, կարողությունները և հմտությունները, ինչպես նաև աշխատանքային ստաժը, գիտական կոչումը և աստիճանը: Հավասար պայմանների դեպքում հաշվի են առնվում նաև գիտական հոդվածների, ուսումնամեթոդական ձեռնարկների և մենագրությունների հրատարակումները:
4. Թեկնածուն ընտրվում է մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Բաց քվեարկությամբ ընտրված դասախոսի թեկնածուն հաստատվում է ՄՈՒՀ-ի տնօրենի կողմից:
5. Ուսումնական մասի վարիչը քվեարկության արդյունքների հիման վրա պատրաստում է հրամանի և պայմանագրի նախագիծ:
6. Հրամանը հիմք է հանդիսանում ընտրված թեկնածուի նշանակման համար:
7. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում տնօրենի հաստատման պահից:

«Մեհրաբյանի անվան բժշկական
քոլեջ» ՍՊԸ փոխտնօրեն՝ /Հ.Ա. Բաբայան/